ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

«Ուրախացի՛ր, Մարիամ, աստվածատունկ դրախտ,
որովհետեւ աստվածաբույս մարմինը, որպես կյանքի ծառ,
քո մեջ արմատացավ ու Բարձրյալի զորությունը
քեզ անհպելի փաղավարի վերածեց՝ բոցեղեն սրի կողքին»:
Պետրոս եպս. Սյունեցի- VI դար («Գովեստ Սուրբ Աստվածածնի եւ Միշտ Կույս Մարիամի»)

Մարիամը ծագումով Դավիթ մարգարեի թագավորական ցեղից էր: Մանուկ հասակից իր բարեպաշտ ծնողների՝ Հովակիմի եւ Աննայի կողմից նա ընծայվեց Աստծուն եւ հանձնվեց Երուսաղեմի Տաճար, որտեղ Մարիամն զբաղվում էր ձեռագործով, Սուրբ Գրքի ընթերցանությամբ եւ աղոթքով: 14 տարեկանում, երբ ծնողներն արդեն չկային, նրան նշանեցին Դավթի ցեղից Հովսեփի՝ մի ծեր եւ բարեպաշտ մարդու հետ: Նրանք բնակվում էին Նազարեթ փոքրիկ քաղաքում, որտեղ էլ Մարիամին այցելեց Գաբրիել հրեշտակը՝ նրան փոխանցելով աստվածապարգեւ ավետիսը (տե՛ս Ղուկ. 1.26-28), որով էլ սկսվում է մարդկության փրկագործության պատմությունը:

Իրենիոս Լիոնացին (մոտ 130-202 թթ.), խոսելով հրեշտակից Ճշմարտության ավետիս ստացած Մարիամի սրբության մասին, գրում է, որ ինչպես Եվան, գայթակղվելով հրեշտակի խոսքերից, հեռացավ Աստծուց՝ զանց առնելով Նրա խոսքը, Սուրբ Կույսը հրեշտակի խոսքի շնորհիվ ավետիս ստացավ, որպեսզի կրի Աստծուն՝ հնազանդվելով Նրա խոսքին (հմմտ. «Ընդդեմ հերետիկոսների», 5. 19): Սուրբ Կույսը, ընդունելով հրեշտակային ավետիսը, հանձն առավ Աստվածամայր լինելու երկրավոր ու երկնավոր առաքելությունը: Այս ամենից հետո էլ, ի կատարումն երկրային առաքելության, իր Միածին Որդու միջոցով երկինք վերափոխվեց՝ լինելով մարդկության համար կատարելության գերագույն մարմնացում:

Քերթողահայր սուրբ Մովսես Խորենացին (410-490 թթ.) ունի Աստվածամորը նվիրված գեղեցիկ ճառ, որտեղ նաեւ տեղեկություններ է փոխանցում Աստվածամոր կյանքի եւ նրա՝ մարդկության փրկության մեջ ունեցած դերի մասին: Միքիայի մարգարեության (5:2) մեկնությամբ ի ցույց է դնում Սբ. Կույսի ազգաբանությունը՝ մասնավորաբար մատնանշելով նրա արքայական ծագումը՝ զուգորդված քահանայական ազգակցությամբ՝ «Եղիսաբեթին ազգակից»: Խորենացին վկայում է, որ Սուրբ Կույսը սքանչելի վարքով, սրբությամբ գերազանցեց բոլորին: Պատմահոր քնարերգության մեջ Աստվածածինը, ի թիվս վերոնշյալ գովեստների, մեծարվում է նաեւ «աստվածատիպ պատկեր», «Երրորդության հարս», «աստվածակիր մարմին» բնորոշումներով:

Խորենացին նշում է Աստվածածնի տարիքը Քրիստոսին ծնելու (15 տ.) եւ վերջինիս կողմից երկինք վերափոխվելու ժամանակ (60 տ.), ապա անդրադառնում Սբ. Կույսի կրած չարչարանքներին ու վտանգներին. 1. Հրեաների արգելքը՝ Գեթսեմանիի պարտեզում կամ Փրկչի այլ տնօրինական վայրերում աղոթելու հետ առնչված, որտեղ Սուրբ Կույսն այցելում էր միայն գաղտնի: 2. Հրեաները ցանկացան այրել տունը, որտեղ գտնվում էր Աստվածածինը, սակայն հուրը այրեց 7 հրեաների՝ այդ թվում՝ Կայիափա, Աննա եւ Ղեւի քահանայապետերին՝ տանը ոչ մի վնաս չտալով: 3. Քրիստոսի մկրտության օրը հրեաները կամեցան բռնել Տիրամորը եւ Հովհաննեսին, սակայն Աստծո հրեշտակը նրանց տեղափոխեց Հորդանանի մյուս ափը, իսկ քսան հրեաներ ջրասույզ եղան: 4. Տիրոջ Համբարձման օրը կրկին հարձակվեցին Տիրամոր վրա՝ նրան քարկոծելու, սակայն Տերը նորից պահպանեց Սուրբ Կույսին: 5. Իսկ երբ Սբ. Աստվածածինը իր հոգին Տիրոջ ձեռքն ավանդեց, հրեաները հարձակվեցին առաքյալների վրա՝ կամենալով հափշտակել Կույսի մարմինը, սակայն ամենքը տեսակ-տեսակ պատիժների արժանացան:

Աստվածամայրը ողջ կյանքում լի էր բոլոր առաքինություններով: Տիրոջ խաչելությունից հետո, Նրա իսկ հանձնարարությամբ (տե՛ս Հովհ. 19.26-27), Մարիամը բնակվում էր Հովհաննես առաքյալի մոտ եւ մշտապես ներկա էր լինում առաքյալների հավաքույթներին: Տիրամայրը նրանց հետ էր թե՛ Քրիստոսի Համբարձման, թե՛ Հոգեգալստի ժամանակ:

Աստվածամայրը, հիրավի, ամենամեծ բարեխոսն է համայն աշխարհի համար իր Որդու առջեւ: Եկեղեցու պաշտամունքի մեջ Աստվածամայրը ոչ միայն բոլոր սրբերից, այլեւ հրեշտակներից էլ բարձր է դասվում: Նրան են նվիրված բազմաթիվ ներբողներ ու շարականներ, նրա բարեխոսությունը հայցելով է սկսվում պատարագի արարողությունը, եւ բազում աղոթքներ անմիջականորեն ուղղված են նրան՝ որպես Աստվածորդուն ամենամերձ եւ իր գթառատությամբ մեզ ամենից շուտ անսացող սուրբ անձնավորության: Աստվածամայրը զերծ էր թե՛ մահացու, թե՛ ներելի մեղքերից, իսկ ադամական մեղքից սրբվեց Ավետման պահին: Այսպիսով, ինչպես երանաշնորհ Գարեգին Ա հայրապետն է նշում, խոսելով Սբ. Աստվածածնի մասին, «Ան մարդկութեան փրկութեան միջոց եղած էր Քրիստոսի Ծննդեամբ ու կը մնայ մինչեւ այսօր որպէս բարեխօս մարդոց իր Որդւոյն մօտ»:

Աստվածածնին ընծայված առաջին ներբողի հեղինակ համարվող Պետրոս Սյունեցին գրում է, որ Տիրամայրը Քրիստոսին ծնող «ինքնաբուխ ջրհորը» եղավ եւ Բարձրյալն Ի՛նքը նետեց Քրիստոսի Ծննդյան հիմերը Սուրբ Կույսի մեջ: Անապական ու կուսական ծննդյան վկայումն է հեղինակի այն խոսքը, թե՝ հրեշտակի տված ողջույնի հետ անսկիզբ Բանը Կույսի լսելիքի միջով ներս մտավ եւ իննամսյա ժամանակով Ինքն իրեն թանձրացնելով՝ ծնվեց այնպես, ինչպես բոլոր մարդիկ են ծնվում, սակայն այս պարագայում Մարիամի կուսության դռները փակված մնացին: Աստվածորդին Ի՛նքը կանգնեցրեց անձեռագործ խորանը եւ Իր տիրական մարմինը առանց արվական սերմի ստեղծեց: «Անարատ կույս» եւ «Տիրոջ անհարսնացյալ մայր» Մարիամը ոչ թե այլ մարդկանց պես՝ ամուսնության սաղմնավոր ծնունդով, այլ անպատմելի, անապական կերպով, Սբ. Հոգու ներգործությամբ հղացավ եւ ծնեց Հիսուս Քրիստոսին:

Հայ Եկեղեցում Աստվածամորը նվիրված տոները 7-ն են:

Հղություն Սուրբ Աստվածածնի. Աստվածածնի մոր՝ Աննայի հղության հիշատակության տոնն է. այն միշտ տոնվում է դեկտեմբերի 9-ին: 1854 թ. Կաթոլիկ եկեղեցին ընդունել է Աստվածածնի անարատ հղության վարդապետությունը, ըստ որի՝ Աստվածամոր ծնունդը, ինչպես Հիսուսինը, զերծ է եղել սկզբնական մեղքից: Մյուս եկեղեցիները մերժել են հավատի այդ նոր վարդապետությունը:

Ծնունդ Սուրբ Աստվածածնի. անշարժ տոն է: Հայ եկեղեցին նշում է XIII դարից սկսած սեպտեմբերի 8-ին:

Ընծայումն Սուրբ Աստվածածնի. երեքամյա Մարիամին, իբրեւ ուխտի զավակի, իր Հովակիմ եւ Աննա ծնողների կողմից Տաճարին ընծայելու հիշատակության տոնն է: Սկզբնապես Հայ եկեղեցին չի ունեցել այս տոնը, բայց սկսած XVI–XVII դարերից, հետեւելով Հույն եւ Լատին եկեղեցիների սովորությանը, տոնը մտել է Տոնացույց եւ նշվում է անփոփոխ՝ նոյեմբերի 21-ին:

Ավետման տոն. Գաբրիել հրեշտակապետի՝ Մարիամ Աստվածածնին Ավետիս բերելու հիշատակի օրն է: Հրեշտակապետը լուր բերեց Տիրամորը, թե Աստծո Որդին իրենից պետք է մարմնանա Սուրբ Հոգու զորությամբ եւ անարատ հղությամբ: Այդ օրը նաեւ Քրիստոսի Մարդեղության տոնն է: Ավետման տոնը Հայ եկեղեցին նշում է անփոփոխ՝ ապրիլի 7-ին: Եթե այդ տոնը նույնիսկ Մեծ պահքին զուգադիպի, եկեղեցու սուգի եւ ապաշխարության ձեւերն ընդհատվում են: Հույն եւ Կաթոլիկ եկեղեցիները, Սուրբ Ծնունդը դեկտեմբերի 25-ին նշելով, Ավետումը մարտի 25-ին են կատարում:

Սուրբ Կույսի Վերափոխման տոն. Սուրբ Կույսի Վերափոխման տոնը Հայ Եկեղեցու 5 տաղավար տոներից մեկն է, որը նշվում է օգոստոսի 15–ի մերձակա կիրակի օրը՝ օգոստոսի 12-18-ի միջեւ: Ըստ ավանդության՝ երբ Սուրբ Կույսը Տիրոջ ձեռքն է ավանդում իր հոգին, առաքյալները Բարդուղիմեոսի

խնդրանքով բացում են Աստվածածնի գերեզմանը ու նրան այնտեղ չեն գտնում, քանի որ ննջումից 3 օր անց Սուրբ Կույսը վերափոխվել էր երկինք: Իսկ Բարդուղիմեոս առաքյալին, որպես մխիթարություն, հանձնում են Տիրամոր փայտանյութ պատկերը: Վերջինս էլ, գալով Հայաստան, Դարբնաց քար կոչվող վայրում կործանում է Անահիտ չաստվածուհու անունով կանգնեցված կուռքերն ու այդ տեղում հիմնում Սբ. Կույսին նվիրված տաճար՝ հիմքում ամփոփելով Տիրամոր պատկերը: Առաքյալը այդ վայրը վերակոչում է Հոգյաց վանք՝ Տիրամոր անունով, որովհետեւ Աստված բազում սքանչելիքներ էր այնտեղ կատարում Սուրբ Կույսի միջոցով:

Գյուտ տուփի Սուրբ Աստվածածնի. Տիրամոր հիշատակության տոների շարքում ուշ շրջանում ավելացել են նրան պատկանած իրերի հայտնությանը նվիրված տոներ: Դրանցից մեկն է ս. Կույսի տուփի գյուտի տոնը: Ըստ ավանդության՝ երկու հույն իշխանազուն եղբայրներ, Երուսաղեմ ուխտի գնալով, լսում են, որ Գալիլիա անունով գյուղում մի հրեա կնոջ տանը հրաշքներ են կատարվում: Հետաքրքրվելով, մտնում են տուն եւ տեսնում մի տուփ, որը պատկանել է Աստվածամորը: Հասնելով Երուսաղեմ՝ պատրաստել են տալիս ճիշտ նույն տուփի մի ուրիշ օրինակ եւ վերադարձին, կրկին մտնելով հրեա կնոջ տուն, աննկատ փոխում են տուփերը եւ իսկականը տանում Կ. Պոլիս: Հայ եկեղեցին այս տոնը նշում է XVIII դարից, երբ այն ընդգրկվել է Սիմեոն Ա Երեւանցի կաթողիկոսի 1774 թ. հրատարակած եւ բարեփոխած Տոնացույցի մեջ: Տոնակատարվում է Հոգեգալստյան հինգերորդ կիրակի օրը՝ հունիսի 14-ից հուլիսի 18-ը:

Գյուտ գոտու Սուրբ Աստվածածնի. V դ. սկզբին՝ բյուզանդական Արկադիոս կայսրի օրոք (395–409 թթ.), Երուսաղեմում գտնվել է Աստվածամոր գոտին, որը հանդիսավորությամբ տարվել է Կ. Պոլիս, պահվել Սուրբ Աստվածածին եկեղեցում ու պաշտամունքի առարկա դարձել: Հայ եկեղեցին մինչեւ XVIII դ. այս տոնը չի նշել: Սիմեոն Ա Երեւանցի կաթողիկոսը 1774 թ. հրատարակած Տոնացույցում ընդգրկել է այդ տոնը, որը յոթ օրվա շարժականությամբ նշվում է Վերափոխմանը հաջորդող երկրորդ կիրակի օրը՝ օգոստոսի 26-ից սեպտեմբերի 1-ը հանդիպող կիրակի օրը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Արամ Դիլանյան,** *Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տոները (տոնախոսական ժողովածու),* Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001:
2. **Գարեգին աբեղայ Սարգիսեան**, *Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը ըստ հայ շարականներու*, Գանադա, 2003:
3. **Իոհան ավագերեց Մեյենդորֆ,** *Ներածություն հայրախոսական աստվածաբանության,* Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2013**:**
4. **Պետրոս Սյունեցի,** *Գովեստ ի Սուրբ Աստուածածին*: Մատենագիրք Հյաոց, Գ. հատոր, Զ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2004- էջ 389-395:
5. **Սուրբ Մովսես Խորենացի,** *Աստվածաբանական երկեր*, Ս. Էջմիածին, 2007:
6. **Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեան**, *Աստուածամայրը,* Վենետիկ, 1977:
7. **Թամար Տասնապետեան,** *Աստուածածնի մասին,* Անթիլիաս, 1996:
8. https://www.sacredtradition.am/Calendar/xorh.php?NM=1&iM=1101&iA=143&iL=0&ymd=20150917: